

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿ

Հրապարակող փաստաթուղթը Ավետիք Իսահակյանի (1875—1957) նամակն է սփյուռքահայ բանաստեղծ, թարգմանիչ ու նկարիչ Զապել Պոյաճյանին (1872—1957)։ Այն ինքնագիր է և պահվում է ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվի Զապել Պոյաճյանի անձնական ֆոնդում (ֆ. 420, ք. 52, գ. 17, թ 1—2)։

ՋՈՒՆԻՏԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեծաառաջանդ բանաստեղծ և նկարիչ Զ. Պոյաճյան, Լոնդոն

Երևան, 6. 1. 1946

Շատ սիրելի բարեկամ օր. Զապել Պոյաճյան.

Ձեր նամակը շատ մեծ ուրախություն պատճառեց ինձ, կնոջս և որդուս և Ձեր բարեկամներին՝ Գարեգին Լևոնյանին՝ և տիկին Աղավնուն։ Արդեն Ձեր առողջության և հաջողությունների մասին ինձ մանրամասն տեղեկություններ տվեց Պ. Ս. Քյուրքճյանը։ Պատերազմից ի վեր Ձեր վերաբերմամբ ոչ մի լուր չունեինք։

Հաճախ ենք հիշել Ձեզ մեր տանը՝ սիրով և կարոտով։ Ձեր մասին խոսել ենք մեր շրջանում։ Ձեր գեղեցիկ գիրքը՝ «Հայ լեզենդներն ու պոեմները» անգլերեն², որ նվեր էիք ուղարկել ինձ Լոնդոնից, տակավին 1918 թ. Երեվանում շատերին համ ցույց տվել, որոնց մեծ հիացում է պատճառել և արդեն նրանք դրանով ծանոթ են Ձեր անձի և Ձեր գործի հետ։

Բնավ չեմ մոռացել հանգուցյալ տիկ. Մոշելեսին. աչքիս առջևն են նրա երկու փոքրիկ կաղմած ալբոմները՝ նշանավոր մարդկանց ձեռագրերով։ Շատ ուրախ եմ, որ այս ահավոր պատերազմից դուրս եք եկել անվնաս և, մանավանդ, ժամակորույս չեք եղել, բեղմնավոր աշխատանք եք տարել, այնքան գրական և նկարչական գործեր եք ավարտել։

Հիանում եմ Ձեր անսպառ եռանդի և ստեղծագործական մեծ հնարավորությունների վրա, որ իրոք եզակի է և զարմանալի. մանավանդ Ձեր հայրենասիրությունը և նվիրումը հայկական արվեստի և կուլտուրայի հանդեպ ամեն գնահատանքից գերիվեր է³։

Կփափագեի, մեծարգո բարեկամս, բոլոր սրտով կփափագեի, որ Դուք երկար ու երկար ժամանակ լինեիք քաջառողջ՝ Ձեր բոլոր երազները իրականացնելու կարողությամբ, և բախտ ունենայինք Ձեզ տեսնելու մեզ մոտ, մեր պաշտելի հայրենիքում, որին այնքան նվիրված եք և սիրում եք այնքան անշեշ ամլոնով, գիտակցորեն և բանաստեղծորեն։

Թանկագին բարեկամ, գրել եք, որ թարգմանում եք անգլերենի իմ «Աբու-Լալա-Մահարին»⁴, շատ զգացված եմ և շոքված. կանխապես հավատացած եմ, որ հաջող և գեղեցիկ կլինի, գիտնալով Ձեր տաղանդը, փորձը և հմտությունը, միայն կխնդրեի բարի լինեիք նկատի ունենալու հետևյալը. եթե թարգմանում եք Բոստոնում 1922 թվի տպագրված օրինակից, այնտեղ մի սխալ է սպրդված. VII սուրահում տպված է «Դու յավեստ գթոտ, համը խորտակող...», պիտի լինի այսպես. «Դու յավեստ գթոտ, մահը խորտա-

կող...»։ Եթե արդեն ուշ չէ, կխնդրեի՝ ուղղեիք։ Նաև շատ կխնդրեի, որ երկու օրինակ ինձ հասցնեիք։

Ջերմագին բարեններ կնոջս, որդուս և իմ կողմից։
Խորին հարգանքներով միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան։

2. Գ.—կխնդրեի բարևս հաղորդեիք Պ. Ս. Քյուրքճյանին

Հասցեն— U.R.S.S.

Erevan Armentie

փող. № 12, Ղ. 'Լուկասյանի

Ավ. Իսահակյան

Ծ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Գարեգին Լեոնյան (1872—1947)—գրականագետ, արվեստաբան, «Գեղարվեստ» հանդեսի հիմնադիրն ու խմբագիրը, որի էջերում էլ ղեկավարել են Ջ. Պոյաճյանի նկարները։
2. «Հայկական լեզենդներ և պոեմներ» վերնագրով անթուղիան կազմել է Ջ. Պոյաճյանը։ Այն հրատարակվել է Նյու Յորքում, 1916 թ.։ Շքեղ պատկերազարդ ժողովածու է, որի նկարազարդումը կատարել է Պոյաճյանը։ Ժողովածուում ընդգրկված են նաև Իսահակյանի բանաստեղծությունները։
3. Ջ. Պոյաճյանը հայ ժողովրդին նվիրած բազմաթիվ հոդվածների հեղինակ է։ Հանդես է եկել հայ դատի պաշտպանությամբ։
4. «Աբու-Լալա-Մահարի» պոեմը Ջ. Պոյաճյանը թարգմանել է անգլերեն, որը առաջին անգամ տպագրվել է 1948 թ., ամերիկահայ առաջնորդարանի հրեկյանական ժողովածուում։ Գրքի նկարազարդումը նույնպես պատկանում է Ջ. Պոյաճյանին։